

ցող ընդ լաւաջադիմութիւն սիրեցեալ զաւակացս Ս. Հօրն
Մերոյ Կրիստոսի Լուսաւորչի, կամք մնամք խոնարհ Աթոռա-
կալ Նորին

ՄԿՐՏԻՉ ԿԱՔՈՒՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս Հայրապետական լամի շնոր-
հաց Փրկչին 1902 ի 24-ն լունուարի և ըստ
տոմարիս ՌՅՄԲ ի Հայրապետութեան Մե-
րում Թ. ամի լԱրարատեան Մայր Աթոռ ս.
Էջմիածնի ի Վաղարշապատ. Համար 101.

Կ. ՊՕԼՍԻ ԱՄԵՆ. ՊԱՏՐԻԱՐԷԻ ԶՐՋԱԲԵՐԱԿԱՆԸ

Գաւառական որբանոցներու տեղութեան պայմանաժա-
մը կսկսի լրանալ հետզհետէ և հարկ կը լինի փակել զանոնք
մի առ մի, քանի սպառին բարերարներու սահմանած նպաստ-
ներն, և զաղբին ընդհանուր նուիրատուութիւնք, որոց արդ-
իւնքով երեսուն և չորս որբանոցներ բացուեցան կարօտեալ
գաւառներու մէջ: Այս պոժամանակեալ հաստատութիւնք պա-
տրապարեցին ու խնամսցին ճարդ բաղմաթիւ անտէր մանուկ-
ներ, պատուար կանգնելով կարօտութեան դէմ, որու անմը-
ւունչ զոհերը պիտի լինէին այդ մանուկներն, եթէ պետա-
կան շնորհներու հետ՝ մեր ազգայնոց ձեռնտուութիւնք չ'իս-
նէին անոնք օգնութեան:

Այլ սակալն այդ որբանոցներուն մէջ կան տակաւին
անչափահաս ու կարօտ աղաք, արժանի խնամքի ու պաշտ-
պանութեան, կը գտնուին դեռ շատեր՝ որ չեն աւարտած
արհեստն, զոր կուսանին, հալթալթելու համար իրենց ողբ-
պահիկն. ևրբ մեկնին որբանոցէն, ուստի հալիւ թէ գաւառ-
ներու մէջ լուած որբանոցներէ ոմանց փակման լուրն, թա-
խանձագին խնդիրներ կը տեղան ի Պատրիարքարան, երկա-
րածցելու դեռ անոնց տեղութեան շրջանն և արգիլելու ակն
բազմադիմի անպատեհութիւններն, որ կրնան ծաղիլ որբերու
լքումէն:

Այսպիսի պարագայից առջև փակել լեղակարծ այդ գթու-
թեան լարկերն և ցիր ու ցան վտարել ու իրենց բազդին
լքանել այդ մատաղատի մանկտին, մանաւանդ ցուրտ ձմեռով,
որ պատած է արդէն գաւառներն բուքով ու ձիւնով, կարելի
չէր, առանց տաղնապելու խղճի խալթէ, առանց ծանր պա-
տասխանատուութեան մ'ենթարկուելու լզգին առջև, որ այն-
քան մեծ զոհողութիւններ լանձն առած էր թշուառութեան
ձեռքէն լիլելու համար բազդին այդ զրկեալներն, միանդա-

մալն և Տէրութեան առջև, որ անոնց պաշտպանութիւնն հրամալած էր, շնորհելով կարևոր դիւրութիւններն:

Բայց հոգածութեան արժանիներն՝ որբանոցներու պատսպարեալներն չէին միայն: Անոնցմէ դուրս գտնուող տղաքներն ալ, որ նպատակով կատրէին, պէտք էր դնել ալ ևս աշխարհի վիճակի մը մէջ, որ չմնային անգործ և ցվերջ կարօտ օգնութեան, ալ կարենային աշխատիլ և իրենց ձեռաց վաստակովն հոգալ զիրենք: Երաց այս վիճակին մէջ կարևոր էր ուրեմն աշխարհի կարգադրութիւն մը, որ զօրէր այդ կրկին պէտքերուն միապէս դարման բերել, և նոյն իսկ աշխարհի եղանակաւ մը, որ ստարէր միանգամայն ժողովրդեան ալ ապրուստի միջոցներն ընդարձակելու, ցորչափ կարօտութիւնն համատարած էր, սնտեսական աննպաստ պարագաներու պատճառաւ: Միակ դարման մը կը ներկայանար, այն է գաւառական զխաւոր կեդրոններու մէջ մնալուն ու կանոնաւոր արհեստանոցներ հաստատել, փոխան առժամ եւլ որբանոցներու, որ տեակեան արդիւնք մը չէին կրնար ունենալ, և այս հաստատութեանց մէջ գիշերօթիկ պատսպարելով հանդերձ՝ անչափահաս ու պաշտպանութեան կարօտ որբերն և ի մասնաւորի զանոնք, որ փակելի որբանոցներէն դուրս պիտի ելնէին, ընդունիլ նաև ցերեկեայ՝ ուրիշ գաւառացի տղաքներ, և ասոնց ամենուն սովորեցնել, ըստ տեղւոյն պիտանի արհեստներ և երկրագործական կարևոր գիտելիքներ, առևտրական հրապարակներու վրայ խնդրուած շահաւէտ բերքերու մշակութեան համար, և այս արհեստանոցներու միջոցաւ ու զանազան կարգադրութեանց ներքև միանգամայն երկրագործ դասուն դիւրութիւններ ընծայել, քաջալերելու համար մշակութեանց նոյն կարևոր ճիւղը: Հետևաբար՝ Նպաստից Յանձնաժողովին հետ համախորհուրդ՝ այս կարգադրութիւնն ընելով՝ սահմանեցինք՝ լատուկ հրահանգով մը՝ արհեստանոցներու կազմակերպութեան եղանակն ու պայմաններն, և որոշեցինք միազամայն մինչև զարուն լետաձգել փակումն ալն որբանոցներուն, որոց պս լմանաժամը լրացած էր:

Այս արհեստանոցներն, որք սահմանուած են այսքան է՝ ական կարօտութիւն մը լրացնելու, պիտի հաստատուին ու պահպանուին զխաւորարար այն կամաւոր նուէրովն, որ ամիս մի Ս. Մինդեան տօնին առթիւ պիտի հաւաքուի մեր քարեւէր ազգս լիններէն: Իարեգործութեանց մէջ ամենէն քաղցրատգունն ու հոգեպարարը չէ միթէ, ու նաև զերաղանցապէս վսեմն, որ զմարդ բարձրացնէ ղէպի Նախախնամողն տիեզերաց, օգնել ու տէր կանգնիլ որբին ու կարօտ մանուկին, անգոր արարածներ՝ անմղ անարատ, որ անկարող են զիրենք պահպանելու աշխարհային աղէտներու ղէմ, որ անդիտակ զօհերն կը լինին բւղղին, որ կը տառապին առանց զանգատելու, որ կը ժպտին՝ արտասուելու ատեն, և հլութեամբ կը համալիրպիւն ամենալնի, կրելով իրենց հոգւոյն խորն՝ դառնու-

Թիւնն իրենց բովանդակ վիշտերուն: Ահա՛ այս դեռս տի էակներուն, այս խեղճ պղտիկներուն պայտօղանութեան համար է նուէրն, զոր կը խնդրենք աղերսագին, այս Ս. Մննդեան հրաշալի տօնին առթիւ, լանուն մանկացելոյն Յիսուսի, որ այնքան կը խանդաղատէր մանուկներուն վրայ, որ երբ կուզէին հեռացնել զանոնք իրմէ՝ կը կրկնէր սաստելով «Ի՞նչ տուք մանկուտն դալ առ իս»:

Լի ենք լուսով որ սիրալոծար պիտի պատասխանէք մեր հրաւերին, և հասցնէք մեզ Ձեր նուէրն, առատօրէն և զուարթութեամբ բոլրած Ձեր սիրտէն, վստահ ենք, որ այս կարևոր ձեռնարկին լաջողութեանն համար, որով և եթ պիտի պսակուի որբոց պաշտպանութեան գործը, պիտի բերէք մեզ Ձեր օգնութեան բաժինը և անտարբեր չպիտի մնաք այս նոր պէտքին առջև՝ դուք բոլոր, ցարդ չՂլացաք օգնել կարօտին և լըքեալին, դուք որ չնեքեցիք Ձեր խղճին անպայտպան թողուլ անօգնական մանուկը: Գթութեանց Տէրն ընդունի Ձեր գթութեան նուէրը, և անոր փոխան հեղու Ձեր վրայ իր բարկադեղ բարիքներն ու շնորհներն, և ինքն իր Ամենակալ Աջովն հովանի Ձեր վրայ՝ զերծ պահէ զՁեզ, Ձեր ընտանիքն, Ձեր դասակներն, Ձեր պարսպաններն, ամէն վիշտերէ: «Տուք և տացի Ձեզ»:

Մնամք աղօթարար

Պատրիարք Կոստանդնուպոլսոյ
ՄԱՂԱՔԻԱ ԱՐԲԵՊԻՍԿՈՊՈՍ

ՀՐԱՀԱՆԳ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՆ

ԳԱՒԱՌԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԱՐՀԵՍՏԱՆՈՑՆԵՐՈՒ

Կ ա զ մ ու թ ի լ ն

ՅՕԳ. 1.— Գաւառական առժամանակեալ որբանոցներու տնօրութեան պայմանաժամին լրանալովը՝ տակաւին անչափահաս գտնուող որբ և կարօտ մանուկներն իսպառ անխնամ չթողու համար Ազգային Պատրիարքարանի կողմէ առաջնորդական գլխաւոր կեդրոններու մէջ՝ ուր որ լարմար դատուի, երկու սեռի տղոց համար՝ ուրոյն արհեստանոցներ պիտի հաստատուին:

ՅՕԳ. 2.— Այս արհեստանոցներու ընդհանուր հասցիքներն են,— 1^o. Կայսերական կառավարութեան կողմէ կարօտ մանկանց համար զանաղան առիթներով շնորհուած նպաստք. — 2^o. Բարեաւէր ազգալնոց կողմէ տրուած տարեկան այն կամուր նուէրն, զոր Սրբազան Պատրիարքն ամէն տարի Ս. Մննդեան տօնին առթիւ կստանայ ուղղակի՝ մասնաւոր կերպերով գիմելով անոնց: — 3^o. Բարերարներու նուիրած և սահ-